ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

«20» դեկտեմբերի 2011թվական
ք. Գյումրի

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ՎԱՐՈՒՄ ԷՐ՝ Գյումրու քաղաքային համայնքի ղեկավար ***Վ.Կ.Ղուկասյանը***

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար ***Բ.Վ.Ալեքսանովը***

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝ Գյումրու քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

Հ.Պողոսյանը, Գ.Առաքելյանը, Ա.Բաղրամյանը, Էդ.Ավետիսյանը, Թ.Համբարձումյանը, Գ.Աղամյանը, Վ.Կիրակոսյանը, Մ.Սահակյանը,

---

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝

Ս.Պետրոսյանը	*- ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ*
Հ.Մամիկոնյանը	*- ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական վարչության պետ*
Գ.Մանուկյանը	*– քաղաքապետի տեղակալ*
Ռ.Հովհաննիսյանը	*– քաղաքապետի տեղակալ*
Լ.Խաչատրյանը	*- քաղաքապետի գլխավոր խորհրդական*
Ա.Մազմանյանը	*- քաղաքապետի ռեֆերենտ*
Լ.Աղեկյանը	*- քաղաքապետի մամուլի քարտուղար*
Մ.Գրիգորյանը	*- աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ*
Հովհ. Գրքիկյանը	*- աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ*
Ռ.Հակոբջանյանը	*- աշխատակազմի քաղաքաշինության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժնի պետ*
Հ.Գասպարյանը	*– աշխատակազմի ճարտարապետական բաժնի պետ -քաղաքի գլխավոր ճարտարապետ*
Հովհ. Կարապետյանը	*– աշխատակազմի կրթության բաժնի պետ*
Ա.Կարապետյանը	*- աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բարժնի պետ*
Սլ.Ղազարյանը	*- աշխատակազմի անօրինական շինությունների և հողազավթումների վերահսկման բաժնի պետ*
Ա.Սարգսյանը	*– աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ*
Գ.Չիլինգարյանը	*- աշխատակազմի առևտրի և սպասարկման բաժնի պետ*
Յ.Չաղրյանը	*– աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծությունների բաժնի պետ*
Ա.Պապիկյանը	*- աշխատակազմի բնակարանների հաշվառման և բաշխման բաժնի պետ*
Վ.Հարությունյանը	*- աշխաակազմի տրանսպորտի բաժնի պետ*
Ա.Բաղդասարյանը	*- աշխատակազմի քաղ. դիմումների, առաջարկությունների և ընդունելության բաժնի պետ*
Տ.Առաքելյանը	*- աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ*
Հ.Փափազյանը	*- աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնի պետ*

Նիստին ներկա էին հասարակական կազմակերպություններ, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ

ՕՐԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

1. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

2. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

3. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

4. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

ՕՐԱԿԱՐԳ ԵՆ ՄՏԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԹՎՈՎ 7 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐԸ

1. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Հ.Գասպարյան)

2. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 152-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Ռ.Հակոբջանյան)

3. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. Հ.Գրքիկյան)

4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Հ.Գասպարյան)

5. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 13 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

6. ՔԱՂԱՔԱՅԻ ՀՐԱՉՅԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱՅԻ N 15/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 20,0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

7. ԵՐԳՉՈՒՀԻ ԱՆԱՀԻՏ /ՀՐԱԾԻՆ/ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Ա.Կարապետյան)

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՐԳԸ 11 ՀԱՐՑՈՎ

1. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

2. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

3. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

4. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

5. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Հ.Գասպարյան)

6. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 152-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Ռ.Հակոբջանյան)

7. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. Հ.Գրքիկյան)

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Հ.Գասպարյան)

9. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 13 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

10. ՔԱՂԱՔԱՅԻ ՀՐԱՉՅԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱՅԻ N 15/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 20,0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Մ.Գրիգորյան)

11. ԵՐԳՉՈՒՀԻ ԱՆԱՀԻՏ /ՀՐԱԾԻՆ/ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. Ա.Կարապետյան)

Լ Ս Ե Ց Ի Ն՝

1. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, 69-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած Գյումրու քաղաքային համայնքի 2011թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Գյումրու քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի

ա/ եկամուտների գծով - 2541112,8 հազ. դրամ,
բ/ ծախսերի գծով- 2541112,8 հազ. դրամ:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

2. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Գյումրու քաղաքային համայնքի 2012թվականի բյուջեի նախագիծը՝

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Գյումրու քաղաքային համայնքի 2011թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի
   ա/ եկամուտների գծով - 3223500,2 հազ.դրամ
   բ/ ծախսերի գծով - 3223500,2 հազ.դրամ
2. Հանձնարարել քաղաքապետարանի ֆինանսական բաժնին /պետ Մ. Գրիգորյան/՝
   ա/ ծախսերը կատարել բյուջեի մուտքերի և նախահաշիվների սահմաններում,
   բ/ հաստատված բյուջեի հիման վրա կատարել 2012թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյա բաշխումները, եռամսյա բաշխումները իջեցնել համայնքային ենթակայության բյուջետային կազմակերպություններին,
   գ/ անհրաժեշտության դեպքում 2012թվականի բյուջեի հատկացումների ընդհանուր գումարի 3%-ի սահմաններում կատարել վերաբաշխում, սույն որոշմամբ հաստատված ծախսերի գործառնական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսնված հատկացումների կրճատում 15%-ի չափով կամ ավելացում 30%-ի չափով,
   դ/ նախահաշիվների օրինակները տրամադրել տեղական գանձապետական բաժանմունքին՝ դրամարկղային սպասարկումն իրականացնելու նպատակով,
   ե/ համայնքի բյուջեում ֆունկցիոնալ և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարել միայն համայնքի ավագանու որոշումներով և թույլատրել առանձին դեպքերում փոփոխությունները կատարել համայնքի ղեկավարի որոշումներով:

զ/յուրաքանչյուր եռամսյակ ավագանու նիստին ներկայացնել բյուջեի պլան-կատարողականը և ծախսերի կատարումը նախահաշիվների սահմաններում:

3. Հանձնարարել բյուջետային կազմակերպություններին՝ նախահաշիվները ներկայացնել քաղաքապետի հաստատմանը՝ տարեկան և եռամսյա կտրվածքներով: Յուրաքանչյուր բյուջետային կազմակերպության կատարած ծախսերի հաշվետվությունները ընդունել բաժնի պետի վավերացումից հետո:
4. Բյուջետային կազմակերպությունները, որոնք համարվում են վարկի կարգադրիչներ, ներկայացնում են ֆինանսական բաժին վճարման հայտեր, որոնց հիման վրա կազմված ընդհանուր հայտը ներկայացվում է քաղաքապետի հաստատմանը:
5. Քաղաքապետարանի բոլոր բաժիններին՝ մշտական հսկողություն սահմանել բյուջետային մուտքերի ժամանակին հավաքագրման աշխատանքների, ինչպես նաև կատարվող ծախսերի նպատակայնության ուղղությամբ:
6. Աշխատակազմի քարտուղար Բ.Ալեքսանովին՝ բյուջեի հաստատման մասին ավագանու որոշման օրինակները ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին՝ համաձայնեցման և տեղական գանձապետական բաժանմունք՝ ծախսերի կատարման:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

3. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների 2012թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Գյումրու քաղաքային համայնքի բյուջետային հիմնարկների աշխատակիցների 2012թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը ըստ բնագավառների՝ համաձայն NN 2 – 56 հավելվածի՝

Հ/Հ	Ոլորտ	*Հաստիք*	*Մարդ*	Պաշտոնային դրույքաչափեր /հազ. դրամ/
1.	համայնքի ղեկավարի աշխատակազմ	574	459	462196.104
2.	մշակույթ	610	496	309435.2
3.	կրթություն	474	529	274664.8
4.	ֆիզկուլտուրա և սպորտ	386.2	326	221480.0
	Ը ն դ ա մ ե ն ը	2044.2	1810	1267776.104

3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 16-ի «Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 231-Ա որոշման 2-րդ կետը:
4. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

4. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2011թվականի նոյեմբերի 15-ի N30 կարգադրության համաձայն համայնքի ենթակայության կազմակերպություններում և բյուջետային հիմնարկներում անցկացված գույքագրման արդյունքները՝ ըստ կազմված ցուցակների և համեմատական տեղեկագրերի՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Գյումրու քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցուցակը՝ /ըստ համեմատական տեղեկագրերի/ 28828527,6 հազ. դրամ գումարով՝

Հ/Հ	Ոլորտ	Հիմնական միջոցներ /հազ. դրամ/	Փոքրարժեք արագամաշ առարկաներ /հազ. դրամ/
1	ապարատ	28196066,4	7774,2
2	մշակույթ	74572,1	12938,8
3	ժողկրթություն	365396,6	46029,5
4	ֆիզկուլտուրա և սպորտ	4876,9	5062,0
5	կոմունալ տնտեսություն	1086,0	137,0
6	«Կումայրի-արգելոց» թանգարան	10099,0	200,4
7	«Գյումրու ՈՒԱՏ» ՍՊԸ	33688,8	1200,0
8	«Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի արժեթղթեր	15000,0	-
9	Սոցիալական ծառայությունների Գյումրի –1 և Գյումրի 2 տարածքային բաժիններ	10105,9	409,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	28754776,7	73750,9

2. Հաստատել կոմունալ համակարգի ներկայացված ցանկը /չունեն հաշվեկշռային արժեք/՝

շատրվաններ	10 անվանում
հուշարձաններ, հուշաղբյուրներ, այլ օբյեկտներ	72 անվանում
անցումներ	6 անվանում
կանգառներ	42 անվանում
փողոցներ և մայթեր, ասֆալտապատ տարածք	184 անվանում
նրբանցքներ և շարքեր	20 անվանում
կանաչապատ տարածք	86 անվանում
անձրևատար կոյուղի և դիտահորեր	23 անվանում
ոռոգման ցանց	24 անվանում
արտաքին լուսավորության ցանց	3419 անվանում

3. Նախկին կապիտալ շինարարության վարչության քաղաքապետարանին հանձնված պահեստային տնտեսությունում գտնվող նյութերի վիճակը և հետագա օգտագործելու նպատակահարմարությունը հիմնավորելու համար կազմել համապատասխան հանձնաժողով և նյութերը հետագա փչացումից փրկելու համար դրանք ըստ անհրաժեշտության տալ համայնքապատկան օբյեկտներին կամ օտարել:
4. Հանձնարարել քաղաքապետի տեղակալ Գ.Մանուկյանին համապատասխան բաժինների հետ համատեղ երկամսյա ժամկետում ճշտել համայնքապատկան ձեռնարկությունների կողմից օգտագործված շենքերի և շինությունների ցանկը, փաստաթղթավորել և գնահատել դրանք հաշվառելով որպես համայնքի սեփականություն:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

5. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Գասպարյան, Վ.Ղուկասյան

Համաձայն «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14[1] հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի մայիսի 14-ի «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» N 408 որոշմամբ հաստատված կարգի՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄԷ՝

Հավանության արժանացնել Գյումրի քաղաքի վարչական տարածքի գոտևորման նախագծի մշակման ներկայացված քաղաքաշինական առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

*6. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 152-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ռ.Հակոբջանյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու **2011թվականի նոյեմբերի 4-ի** «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» **N 152-Ա** որոշմամբ հաստատված ցուցակի 2-րդ տողով հաստատվել է **Ղորղանյան փողոցի N 127/3** հասցեի **285.0**քառ.մ առանձնացված հողամասի մեկնարկային գինը՝ **1 430 000 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուն հազար)** Հայաստանի Հանրապետության դրամ:

Հողամասի աճուրդով օտարման հայտարարությունը տրվել է մեկ անգամ և հայտ չներկայացնելու պատճառով չի կայացել **(2011թվականի դեկտեմբերի 8-ի N 78 արձանագրություն):**

Ընդունելով աճուրդային հանձնաժողովի **2011թվականի դեկտեմբերի 8–ի N 78/1** ներկայացված առաջարկությունը, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 69-րդ հոդվածի 1-ին կետի, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերության, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետի՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի նոյեմբերի 4--ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 152-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 2-րդ կետն ամբողջությամբ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2	Ղորղանյան փող. 127/3 8-րդ գոտի	ԱՀ11-0238 285.0	բնակավայրերի խառը կառուցապատում	անհատական բնակելի տան կառուցում	**1100 000** /մեկ միլիոն հարյուր հազար/

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

7. ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ.Գրքիկյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքապետարանի կարիքների համար անհետաձգելի պահանջ է առաջացել ձեռք բերելու տեխնիկա /1)տրակտոր 504-1հատ; 2)գութան-1հատ; 3)սայլակ-1հատ; 4)հրող կովշ-1հատ; 5)հնձիչ-1հատ; 6)խոզանակ-1հատ; 7)կուլտիվատոր-1հատ/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է և դա հնարավոր չի եղել կանխատեսել, ուստի գնումն անհրաժեշտ է կատարել անհապաղ:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերով և 54-րդ հոդվածով՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Գյումրու քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտ տեխնիկա՝ /1)տրակտոր 504-1հատ; 2)գութան-1հատ; 3)սայլակ-1հատ; 4)հրող կովշ-1հատ; 5)հնձիչ-1հատ; 6)խոզանակ-1հատ; 7)կուլտիվատոր-1հատ/ ձեռքբերման համար «Յունի բանկ» ՓԲԸ-ից 8490000 /ութ միլիոն չորս հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ վարկ վերցնել:
2. Վարկի մարումները կատարել համայնքի 2012թվականի բյուջեի ֆոնդային մասից:
3. Որպես վարկի մարման ապահովման միջոց տրամադրել Գյումրու քաղաքապետի երաշխավորությունը:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Գասպարյան, Վ.Ղուկասյան

Գյումրու համայնքը Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ սահմանված կարգով ներքոհիշյալ շինությունների նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք, որոնք ենթարկվել են պետական գրանցման:

Նկատի ունենալով, որ նշված շինությունների նկատմամբ պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջները՝ շինությունները ուղղակի վաճառքի միջոցով օտարվելու են տվյալ շինությունները կառուցողներին՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել ուղղակի վաճառքի միջոցով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները /հողամասերը/ տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:
2. Շինությունների և հողամասերի օտարման գները սահմանել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ սահմանված գների:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

9. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 13 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՄԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքապետին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 13 անձիք դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով դիմումները՝

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թվով 13 անձանց՝ ցուցակը համաձայն հավելվածի, Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել ընդամենը 565000 /հինգ հարյուր վաթսունհինգ հազար/ դրամ:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

10. ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՉՅԱ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՊՈՂՈՏԱՅԻ N 15/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 20,0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Մ.Գրիգորյան, Վ.Ղուկասյան

Գյումրու քաղաքապետին է դիմել քաղ. Հրաչյա Ղուկասյանը՝ Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի N 15/5 հասցեում գտնվող իրեն պատկանող հողամասի վարձակալության պարտքը զիջելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ քաղ. Հրաչյա Ղուկասյանը վճարունակ չէ և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 431-րդ հոդվածով՝

ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ներել քաղ. Հրաչյա Ղուկասյանի ունեցած Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի N 15/5 հասցեում գտնվող իրեն պատկանող հողամասի վարձակալության վճարի պարտքը՝ **500514 /հինգ հարյուր հազար հինգ հարյուր տասնչորս/** դրամի չափով:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –

11. ԵՐԳՉՈՒՀԻ ԱՆԱՀԻՏ /ՀՐԱԾԻՆ/ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏՎԱՎՈՐ «ՎԱՐՊԵՏ» ՈՍԿՅԱ ԿՐԾՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա.Կարապետյան, Վ.Ղուկասյան

Անահիտ /Հրածին/ Արամայիսի Սահակյանը ծնվել է Շիրակի մարզի Ախուրյանի շրջանի Հովիտ գյուղում: Սովորել և ավարտել է Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝զուգահեռաբար հաճախելով նաև տեղի երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը:

Բեմական առաջին քայլերը սկսել է Գյումրիի Լևոն Մադոյանի անվան ժողգործիքների անսամբլում՝ որպես երգչուհի: Սովորել և ավարտել է Գյումրիի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանը, որից հետո ընդունվել և սովորել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ժողովրդական երգի բաժնում՝ ժողովրդական արտիստ Հովհաննես Բաղալյան դասարանում, ավարտել է նաև կից ասպիրանտուրան:

Աշխատանքի է անցել Ազգային ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլում՝ որպես երգչուհի, հետագայում, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը՝ որպես մենակատար:

Նորանկախ պետության կայացման տարիներին, երբ երկիրը ճգնաժամային իրավիճակում էր և մթի ու խավարի պայմաններում մշակույթն ու արվեստն անկում էին ապրում, երգչուհին, հոգու հազար ու մի թելերով երգ ու երաժշտությանը կապված, ստեղծեց ներդաշնակ երաժշտախումբ՝ տաս վարպետ –երաժիշտ կատարողներով և համերգային բազմաբնույթ ծրագրերով հանդես եկավ տարբեր միջավայրերում:

Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում իր ստեղծած համույթի հետ մասնակցեց մի շարք համերգային ծրագրերի՝ արժանանալով բարձր գնահատականների և պարգևների:

Երկրաշարժի 10-րդ տարելիցի կապակցությամբ Գյումրիում՝ Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի ունեցած մենահամերգը, որից ստացված հասույթը երգչուհին նվիրաբերեց Գյումրիի մանկատանը: Բարեգործություններ անելուց բացի՝ Անահիտ Սահակյանը հուշ-համերգ-երեկո նվիրեց անկախության ճանապարհներին մարտիրոսված հայորդիների և 1999թվականի հոկտեմբերի 27-ին զոհված պետական գործիչների հիշատակին: 2000թվականին Կամերայի երաժշտության տանը հանդես է եկել «Երգն է կյանքիս ուղեկիցը» մենահամերգով: 2001-2005թվականներին Անահիտ Սահակյանը անձնական խնդիրներով բացակայել է Հայաստանից: 2006թվականին վերադառնալով հայրենիք՝ հանդես է եկել «Երգիս թևերով» համերգային ծրագրով՝ նվիրված հայրենի քաղաք Գյումրիի վերածննդին: 2008թվականին Երևանի Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում կայացել է «Երգս վերքի բալասան» խորագիրը կրող համերգ-երեկո՝ նվիրված երկրաշարժի 20-րդ տարելիցին: Այդ օրը տեղի է ունեցել նաև «Այս մեկն էլ ներիր» առաջին ձայնասկավառակի շնորհանդեսը: 2009թվականի նոյեմբերի 10-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում տեղի է ունեցել երգչուհու երաժշտական գործունեության 20-ամյակին նվիրված «Լույս ստվերի միջով» խորագիրը կրող մենահամերգը:

Մենահամերգներով հանդես է եկել՝

2010թվականի հոկտեմբերի 12-ին Ջավախքի /Ախալքալաքի/ մշակույթի տանը, 2010թվականի հոկտեմբերի 26-ին Գյումրիի Վ.Աճեմյանի անվան դրամատիկ թատրոնում,

2010թվականի հոկտեմբերի 31-ին Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում,

2011թվականի մայիսի 21-ին Երևանի Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում՝ «Երգս սեր է, սերս՝ երգ…» մենահամերգով՝ նվիրված մեր մայիսյան հաղթանակներին:

Հայ ժողովրդական երգը լավագույնս ներկայացնելու գործում ունեցած մեծ ավանդի համար՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և հիմք ընդունելով Գյումրու ավագանու 2003թվականի սեպտեմբերի 11-ի ««Վարպետ» կրծքանշանով պարգևատրելու կարգը հաստատելու մասին» N 5 որոշումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Երգչուհի **Անահիտ /Հրածին/ Սահակյանին** պարգևատրել պատվավոր «ՎԱՐՊԵՏ» ոսկյա կրծքանշանով:

ԿՈՂՄ – միաձայն
ԴԵՄ –